

ԼԵԶՎԻ ԵՎ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԲԱՌԻՄԱՍՏԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Արտաշես Մարտիրոսյան

Բանասիրական գիտությունների թեկնածու

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

ՀՀ, Երևան, Ալեք Մանուկյան 13

Էլ. հասցե՝ artashesmartirosyan@yandex.ru

Հոդվածը ներկայացվել է 27.01.2022, գրախոսվել է 31.01.2022, ընդունվել է տպագրության 12.12.2022

DOI: 10.53548/0320-8117-2022.3-237

Ներածություն

Լեզվի և մտածողության (բառի և հասկացության) հարաբերակցության հիմնախնդիրը վաղուց անտի հուզել է թե՛ փիլիսոփաներին ու հոգեբաններին, թե՛ ֆիզիոլոգներին ու լեզվաբաններին, ասել է թե՛ քննվել է տարբեր գիտությունների շրջանակում: Այն հատկապես կարևորվում է բառիմաստի պատմական զարգացման քննության պարագայում, երբ ժամանակի հոլովոյթում բառիմաստը լայն առումով նեղանում, ընդլայնվում կամ չեզոքանում է՝ պայմանավորված մարդու մտավոր գործունեությամբ, նրա աշխարհընկալման շարունակական փոփոխությամբ: Հարցի արժեքը հանգում է հետևյալ պարզ ձևակերպմանը. բառիմաստի փոփոխությունն է պայմանավորում մտածողության «փոփոխությունը», թե՞ հակառակը:

Քննարկման հիմքում լեզվի՝ որպես հասարակության կարևորագույն հաղորդակցման միջոցի և մտածողության առաջնայնության հարցն է, այսինքն՝ ո՞րն է որով պայմանավորված: Հիմնախնդրի շուրջ տրվող տարբեր մեկնաբանություններ հասնում են մինչև մեր օրերը. դա բացատրվում է նախևառաջ լեզու և մտածողություն երևույթների էության հակասականությամբ, որոնց օրենքները տակավին բավարար ուսումնասիրված չեն: Այս բոլոր տարակարծություններում, սակայն, ընդհանուր է մի դրույթ. լեզուն ու մտածողությունը փոխկապակցված և փոխազդեցական հարաբերության մեջ են: Դեռևս XVIII դարում գերմանացի նշանավոր փիլիսոփա Է. Կանտն էր փաստում, որ «...յուրաքանչյուր լեզու մտքերի արտահայտում է, և հակառակը, մտքերի արտահայտման լավագույն միջոցը լեզուն է՝ քեզ և ուրիշներին հասկանալու այդ մեծագույն միջոցը: Մտածել նշանակում է խոսել

ինքդ քեզ հետ»¹: Փաստորեն, լեզվի և մտածողության փոխհարաբերության հիմնախնդիրը երկակի է մեկնաբանվում. դրանք դիտարկվում են որպես միմյանց փոխլրացնող և փոխապայմանավորող երևույթներ:

Մտածողություն. հասկացություն. դատողություն. լեզու

Նախ՝ մտածողության մասին: Գիտական գրականության մեջ մտածողությունը բնորոշվում է որպես «...իրականության ընդհանրացված, միջնորդավորված հասկացական արտացոլում..., որպես ...բարձր կազմակերպված մատերիայի, մտածող ուղեղի արդյունք ...օբյեկտիվ աշխարհի սուբյեկտիվ պատկեր..., որպես ...կենտրոնական նյարդային համակարգի, մարդու գլխուղեղի գործունեության արդյունք, շրջակա իրականության արտացոլման իդեալական պատկերավոր ձև»²: Հոգեբանները տարբերակում են մտածողության երեք գոյաձև՝ *գործնական, պատկերավոր և տրամաբանական*, որոնք որոշակիորեն արտացոլում են մարդու մտածական գործունեության ձևավորման զարգացման փուլերը: Նշված մտածական գոյաձևերից բարձրագույնը տրամաբանականն է, որի հիմքում վերացականն ու հասկացությանին են, որոնք դրսևորվում են տրամաբանական մտածողության հիմնական միավորներով՝ *հասկացություններով և դատողություններով*: Տրամաբանությանն առնչվող հետազոտություններում «հասկացությունը՝ որպես առարկայի իմացության հետևանք, արդեն իսկ պարզ միտք չէ առարկայի տարբերակիչ հատկանիշների մասին. հասկացություն-հետևանքը բարդ միտքն է, որն ընդհանրացնում է նախորդ դատողությունների ու եզրակացությունների երկար շարքը՝ բնորոշելով առարկայի էական կողմերը: Հասկացությունը՝ որպես իմացության հետևանք, առարկայի մասին արդեն ձեռք բերած բազմաթիվ գիտելիքների թանձրուկ է՝ սեղմված մեկ մտքում»³: Ինչ վերաբերում է *դատողությանը*, ապա այն ըմբռնվում է որպես «...մտքի ձև, որում հաստատվում կամ բացասվում է ինչ-որ բան առարկաների և երևույթների, նրանց հատկանիշների, կապերի ու հարաբերությունների վերաբերյալ, և որն օժտված է ճշմարիտն ու սուտն արտահայտելու հատկությամբ»⁴: Լեզվաբանական միտքը, սակայն, դատողությանը տալիս է ավելի ընդգրկուն սահմանում. «...դատողությունը ոչ թե հաստատող-բացասող միտքն է, այլ

¹ Кант 430.

² Шубняков 1981, 44-45, 57.

³ Логика 1956, 29-30.

⁴ Кондаков 1975, 574.

վերջինիս առավել ընդհանուր ձևական տեսակը, որը ենթադրում է իր բովանդակությունը իրականության հետ հարաբերակցող և միավորող նվազագույն մտածական մի ակտ, հետևաբար դատողությունն իր ավանդական ընկալմամբ հարց է և խթանում»⁵: Տրամաբանները դատողություն հասկացության համար տարբերակում են երեք բաղադրատարր: Առաջինը *սուբյեկտն* է՝ իմացությունը դատողության առարկայի մասին, երկրորդը *ստորոգելին* է (պրեդիկատը)⁶՝ իմացությունը այն մասին՝ ինչն է հաստատվում կամ բացասվում առարկայի վերաբերյալ, և *կապը* (շարահյուսորեն՝ հանգույցը), որով սահմանվում է, որ մտածվածը ստորոգելիում բնորոշ է կամ բնորոշ չէ դատողության առարկային⁷: Հավելենք, որ այս բաղադրատարրերը տարբեր լեզուներում կարող են ունենալ տարբեր դրսևորումներ կամ արտահայտության պլաններ, ինչպես, օրինակ, թերի նախադասության պարագայում, որը կառուցվածքով ավարտուն չէ, սակայն հնչերանգով և մտքով ամբողջական է (*Երևան: Ծիծեռնակաբերդ*): Ռուս անվանի լեզվաբան Վ. Զվեգինցևը փաստում է, որ տրամաբանական մտածողությունը հատուկ է բոլոր այն հասուն տարիքի մարդկանց, որոնք առավելապես զբաղված են մտավոր գործունեությամբ: Ի դեպ, որոշ գիտնականների կարծիքով՝ գործնական և պատկերավոր մտածողությունը հատուկ է նաև կենդանիներին (կապիկներ, շներ, կատուներ ևն), որոնց մոտ իսպառ բացակայում է տրամաբանական մտածողությունը: Ընդ որում, կենդանիների մտածողության այդ տեսակների զարգացման աստիճանն անհամադրելի է մարդու մտածողությանը⁸:

Լեզվի և մտածողության փոխհարաբերակցության հիմնախնդրին դիալեկտիկական մատերիալիզմի դիրքերից ուրույն մեկնաբանություն են տվել մարքսիզմի դասականները՝ փաստելով, որ «...փիլիսոփաների համար ամենադժվար խնդիրը մտքերի աշխարհից իրական աշխարհ իջնելն է: Լեզուն մտածողության չմիջնորդավորված իրականությունն է...», որ այն «...գործնական ...իրական գիտակցություն է»⁹: Լեզվի և մտածողության հարաբերակցության հիմքը նրանք պայմանավորում են օբյեկտիվ իրականության գոյությամբ, մարդու աշխատանքային գործունեությամբ՝ մասնավորապես նշելով, որ «...ո՛չ մտքերը և ո՛չ էլ լեզուն ինքնին որևէ յուրահատուկ աշխարհ

⁵ Чесноков 1996, 125-126.

⁶ Տրամաբանություն գիտակարգում **ենթական** սուբյեկտն է, **ստորոգյալը** կամ **ստորոգելին**՝ պրեդիկատը:

⁷ Логика 1956, 71.

⁸ Звегинцев 1962, 293.

⁹ Маркс, Энгельс 1955, 448, 29.

չեն ձևավորում... դրանք զուտ իրական կյանքի դրսևորումներն են»¹⁰: Փաստորեն, նրանք ևս այս երկու երևույթները դիտարկում են օբյեկտիվ իրականության ընկալման միասնական տիրույթում:

Լեզվի և մտածողության միջև առկա կապը պայմանավորված է նրանով, որ մտածողության հիմնական բաղադրատարրերը՝ հասկացություններն ու դատողությունները, իրենց արտահայտությունը գտնում են լեզվական միավորների միջոցով, հասկացությունները՝ բառերի կամ բառակապակցությունների, դատողությունները՝ նախադասությունների: Թե՛ բառերի, թե՛ հասկացությունների բնույթն ընդհանրացնող է. «Հասկացությունը՝ որպես տրամաբանական կարգ, որպես առարկայի մասին գիտելիքների արդյունք, որպես բարդ միտք, որպես նախկին դատողությունների ու հատկանիշների հանրագումարային երկար շարք, առարկայի էական, որոշիչ հատկանիշների և առանձնահատկությունների արտահայտություն, նպատակամղված և տրամաբանական ձևավորումն է այն ընդհանրացման գործընթացի, որն ասես «տարերայնորեն» դրսևորվում է բառի մեջ՝ կախված իր ընդհանրացնող բնույթից»: Այս բնութագրումը Զվեգինցերը տարածում է նաև ինքնուրույն խոսքի մասերի վրա, որոնք «...մշտապես նշանակում են առարկաների որոշակի ամբողջություն՝ այս կամ այն հատկանիշով միավորված առարկաների որոշակի դասի մեջ»¹¹: Հեղինակն այստեղ նկատի ունի որոշակիորեն միասեռ առարկաների ընդհանուր հատկանիշները՝ բացառելով, անշուշտ, հատուկ անունները:

Փաստորեն, լեզվի և մտածողության հարաբերակցության ըմբռնումներում մի բան հստակ է. նրանց կապը հայելային չէ. յուրաքանչյուրը ներկայանում է ուրույն առանձնահատկություններով: Լեզուն նյութական է, նրա միավորներն ունեն հնչյունային ձևավորվածություն, ընկալելի են մեր զգայարանների համար: Մտածողության պարագայում այս ամենը բացակայում է, այն իդեալական է: «Մտածողության նպատակը նոր գիտելիքների ձեռքբերումն է, նրանց համակարգումը, մինչդեռ լեզուն ընդամենը սպասարկում է ճանաչողական գործունեությունը՝ օժանդակելով մտքերի ձևակերպմանն ու գիտելիքի ամրապնդմանը և դրանց հաղորդմանը»¹²: Լեզվի՝ մտածողության այս ճանաչողական գործունեության սպասարկման գործընթացն առանձնակի բնույթ է կրում: Սա պայմանավորված է լեզուների բազմազանու-

¹⁰ Маркс, Энгельс 1955, 449.

¹¹ Звегинцев 1962, 343, 345.

¹² Кодухов 1979, 48.

թյամբ, յուրաքանչյուրի մշակած հատուկ կանոններով: Ուստի լեզվական կանոններն ունեն անհատական բնույթ, մինչդեռ մտածողությունը համընդհանուր է, համամարդկային: Հակառակ պարագայում ազգերն ու ժողովուրդներն իրար չէին հասկանա. անհնար կլիներ թարգմանել առտնին, մանավանդ՝ մշակութային տեղեկությո՜ւր:

Լեզվի և մտածողության կառուցվածքային միավորների փոխհարաբերությունը

Տարբեր են նաև լեզվի և մտածողության կառուցվածքային միավորները: Լեզվի պարագայում դրանք հնչույթներն են, ձևույթները, բառը կամ բառույթը, բառակապակցությունը, նախադասությունը, պարբերությունը ևն. ընդ որում, նշվածներից մտածողության հիմնական միավորների (հասկացության և դատողության) հետ ուղղակիորեն չեն հարաբերվում հնչույթները, իսկ ձևույթները՝ մասնակիորեն (նկատի ունենք արմատական ձևույթները)¹³: Էական անհամապատասխանություններ կան նաև լեզվական մնացած միավորների և մտածողության հիմնական միավորների միջև, ասենք՝ բառի (նկատի ունենք սպասարկու բառերը՝ շաղկապներ, կապեր, նախդիրներ, վերաբերականներ) և հասկացության, նախադասության և դատողության միջև: Բառի և հասկացության ոչ նույնականության վառ օրինակ է *հոմանիշությունը*, երբ նույն հասկացությանը կարող են «փոխարինել» տարբեր բառեր՝ կիրառական՝ համատեքստային նրբիմաստային տարբերություններով, ինչպես՝ գոյականներ (բժիշկ-հեքիմ), ածականներ (դատարկ-սին-փուչ-թափուր-պատիր), բայեր (կառուցել-շինել-պատրաստել): Հասկացությունները հիմնականում հարաբերակցվում են ոչ թե ուղղակիորեն բառերի, այլ նրանց բառային իմաստների հետ: Որպես ապացույց՝ տվյալ լեզվի բառային կազմում գերակշռող բազմիմաստ բառերը, որոնք տարբեր հասկացություններ են արտահայտում՝ հիմք հանդիսանալով *իմաստային դաշտերի* ձևավորմանը (ինչպես՝ **մարդ** – 1. «...կենդանի էակ», 2. «տղամարդ, այր», 3. «չափահաս... տղա», 4. «կնոջ ամուսին», 5. «բարոյական ու մտա-

¹³ Ասվածի համատեքստում ուշագրավ է Է. Աթայանի այն դիտարկումը, որտեղ նա տարբերակում է *լեզվական բառ* և *խոսքային բառ* հասկացությունները՝ քննելով դրանց բովանդակության և արտահայտության պլանները: Բովանդակության պլանում լեզվական բառը տրամաբանական հասկացության ստատիկ նշանն է, արտահայտության պլանում՝ «...հնչյունը ներուձակ անհնչուն «որպես թե հնչյուն» է՝ հասկացության հարաբերակից», մինչդեռ խոսքային բառը բովանդակայինում «...բառի առարկայական վերաբերությունն է...», արտահայտության պլանում՝ կամ «...խոսքի բառում հնչյունն առարկաների իրայնորեն հնչող հարաբերակիցն է՝ առարկայական վերաբերության արտահայտությունը» (հմմտ. Աթայան 1981, 98, 99, 101):

վոր բարձր հատկություններով օժտված անձնավորություն», 6. «աշխատող ձեռք, բանվորական ուժ», 7. «անձ, հոգի՝ որպես հաշվի միավոր...»)¹⁴: Ինչպես տեսնում ենք, **մարդ** հասկացությունը համընկնում է բառի միայն առաջին՝ միջուկային իմաստին, մյուսները ծայրամասային իմաստներ են, որպես կանոն, հուզարտահայտչական, ոճական, գնահատողական երանգավորմամբ, որոնք կարող են դառնալ տարբեր իմաստային հատկանիշներով ձևավորված բառիմաստային խմբերի կամ ենթաբազմությունների անդամներ:

Լեզվի և մտածողության փոխհարաբերություններում հաճախ նույնական չեն նաև *դատողությունն* ու *նախադասությունը*: Եթե դատողության հիմնական բաղադրատարրերն են սուբյեկտն ու ստորոգելին (պրեդիկատը), ապա նախադասությանը՝ ենթական ու ստորոգյալը: Ընդ որում, հաճախ սրանք էլ նույնական չեն. դատողությունը միշտ երկանդամ է, իսկ նախադասությունը կարող է հանդես գալ ոչ միայն երկանդամ, այլև մենանդամ կամ բազմանդամ կազմով: Եվ վերջապես՝ գլխավոր անդամներ ենթական և ստորոգյալը, ասենք՝ պարզ համառոտ նախադասության պարագայում, երբեմն կարող են ուղղակիորեն չհամապատասխանել դատողության սուբյեկտին և ստորոգելին: Այսպես, *Երկինքը մռայլվեց* նախադասության ենթական *Երկինքն* է, ստորոգյալը՝ *մռայլվեց*: Համանման դատողության պարագայում որպես ստորոգելի կարող է հանդես գալ ինչպես բայը, այնպես էլ գոյականը, եթե դատողության առարկան այն առարկան է, որը *մռայլվեց* (հմմտ. Մռայլվողը *Երկինքն* է): Ավելին. նախադասության անդամների շարադասությունը փոխելիս կատարվում է տրամաբանական շեշտի տեղափոխություն (հմմտ. *Երկինքը մռայլվեց* և *Մռայլվեց Երկինքը*): Բացի այդ, նախադասության երանգավորումը փոխելիս, ասենք՝ հարցականի կամ հարկադրականի, այն ընդհանրապես նույնական չի լինի դատողությանը, որովհետև վերջինիս համարժեք է միայն պատմողական երանգավորումը (նախադասությունը), որտեղ կա հաստատում կամ բացասում (հմմտ. *Երկինքը մռայլվեց* և *Երկինքը մռայլվե՞ց*):

Ասվածից կարելի է եզրակացնել, որ չնայած լեզվի և մտածողության բաղադրատարրերը հայելային արտահայտություն չունեն, այնուամենայնիվ, նրանցից յուրաքանչյուրի գոյությունը «պայմանավորված է» մյուսով, նրանց միջև գործում է դիալեկտիկական հակադրամիասնության օրենքը:

Այստեղ՝ մի համառոտ պատմական էքսկուրս՝ հարցի քննության նախապատմությունից:

¹⁴ Աղայան 1979, 977:

Լեզվաբանական հարաբերականություն և իմաստաբանական իդեալիզմ

Լեզվի և մտածողության փոխհարաբերության հիմնախնդրի քննությունն սկիզբ է առել դեռևս XIX դարի առաջին կեսից՝ *լեզվաբանական հարաբերականության* սկզբունքի ձևավորման շրջանից, երբ գերմանացի նշանավոր լեզվաբան Վ. Հումբոլդտը առաջ քաշեց *լեզվի ներքին ձև* գաղափարը¹⁵, որը հիմնարար նշանակություն ունեցավ լեզվի փոխտափայության համար: Ըստ այս գաղափարի՝ հենց լեզվի ներքին ձևն է կանխորոշում մեր սուբյեկտիվ հայեցողությունը, մեր հոգևոր վերաբերմունքը աշխարհի նկատմամբ: Հումբոլդտն ընդգծում էր լեզվի ստեղծագործական բնույթը՝ փաստելով, որ լեզուն հավերժ վերածնվող օրգանիզմ է՝ զարգացման որոշակի օրենքներով, որի ծավալներն ու միջոցները մնում են տակավին կամայական: Նա նույնացնում էր ժողովրդի լեզուն և ոգին՝ վերջինիս գերակայությամբ, ասել է թե՛ ոգին է կանխորոշում լեզուն և նրա կառուցվածքը, որոնք տարբեր են՝ պայմանավորված յուրաքանչյուր ժողովրդի ոգու յուրահատուկ կերտվածքի տարբերության աստիճանով: Փաստորեն, անուղղակիորեն առաջ էր քաշվում այն դրույթը, թե մտածողությունը կախված է յուրաքանչյուր առանձին լեզվից, և լեզվի ու մարդկության ողջ մտածական տիրույթի փոխհարաբերության հիմնախնդիրը հիմնականում լուծվում էր լեզվաբանական հարաբերականության գաղափարի լույսի ներքո: Այս գաղափարի կողմնակիցները (Է. Սեպիր, Բ. Ուորֆ¹⁶ և այլք) գտնում էին, որ յուրաքանչյուր լեզու ունի իր մետաֆիզիկան¹⁷ ըստ էության երկրորդելով Հումբոլդտի այն պնդումը, թե յուրաքանչյուր լեզվում ներառված է իր աշխարհայացքը: «Ամեն լեզու ժողովրդի շուրջն իր տիրույթն է ստեղծում, որը պետք է լքել մեկ այլ ժողովրդի համանման տիրույթն անցնելու դեպքում: Ուստի օտար լեզվի ուսումնասիրությունը մշտապես պետք է լինի մի նոր աշխարհայեցողության նվաճում: Ինչ-որ չափով դա այդպես է, որովհետև ամեն մի լեզու ներառում է մարդկության որոշ մասի հասկացությունների ու պատկերացումների առանձնահատուկ հյուսվածքը: Բայց մենք լիարժեքորեն այդ արդյունքներին չենք հասնում և այն հստակ չենք գիտակցում, քանի որ օգտվելով օտար լեզվից՝ մենք մշտապես նրանում ներառում ենք մեր հա-

¹⁵ Гумбольдт 1984, 37-297.

¹⁶ Сепир 1993, Whorf 1966.

¹⁷ Իմացության մեթոդ, որը հակադրվում է դիալեկտիկային և երևույթները դիտարկում սովորաբար դրանց փոխկապակցվածությունից, հակադրություններից ու զարգացումներից դուրս:

յացքն աշխարհի հանդեպ, անգամ՝ արտահայտության մեր ձևերը»¹⁸: Փաստորեն, Հումբոլդտի կարծիքով՝ ամեն լեզու մի նոր հայացք է աշխարհի նկատմամբ, մի նոր աշխարհայացք: Աշխարհի օբյեկտիվ ընկալումը կատարվում է մտածողության միջոցով, որն իր արտահայտությունը գտնում է լեզվում՝ սուբյեկտում: Նա սուբյեկտիվը հակադրում է օբյեկտիվին՝ եզրակացնելով, որ յուրաքանչյուր անհատ առանձնահատուկ աշխարհայացքի կրող է, հետևաբար նա չափազանցնում է, երբ օբյեկտիվ աշխարհի սուբյեկտիվ ընկալմանը անհատական բնույթ է հաղորդում՝ այն համարելով յուրահատուկ աշխարհայացք: Ստացվում է, որ աշխարհայացքը կախված է ոչ թե մարդու անհատականությունից, այլ տվյալ ժողովրդի լեզվի բնույթից: Այս համատեքստում նա բառը հակադրում է ոգուն՝ նշելով, որ մտածական տիրույթում բառը օբյեկտիվ իրականությանը հավելյալ նշանակություն է հաղորդում՝ ձևավորելով առանձնահատուկ աշխարհայեցողություն, լիովին պայմանավորված շրջակա իրականության մասին մարդկանց պատկերացումներով, որոնք բխում են լեզվից¹⁹: Այս գաղափարն անկյունաքարային դարձավ հետազայում, այսպես կոչված, *իմաստաբանական իդեալիզմի և լեզվաբանական հարաբերականության* տեսությունների կողմնակիցների համար, որոնք մարդկանց կենսագործունեությունը բխեցնում էին լեզվից: Իմաստաբանական իդեալիզմի տեսաբանները (Կառնապ, Այեր²⁰ և այլք), որոնք հանդես եկան XX դարի առաջին կեսին, առաջ էին քաշում այն դրույթը, որ «...լեզվի բառերը զուրկ են իրական նյութական իմաստից, որ նրանց իմաստը չի համապատասխանում իրական երևույթների ու առարկաների հասկացություններին և հիմնված չէ իրականության վրա»²¹: Այս տեսության գաղափարաբանը գերմանացի փիլիսոփա և տրամաբան Ռուդոլֆ Կառնապն էր: 1931 թ. հրապարակած իր մի հոդվածում²² նա ձեռնոց է նետում ավանդական փիլիսոփայությանը՝ կասկածի տակ առնելով մետաֆիզիկայի նպատակներն ու մեթոդները: Իմացության այդ մեթոդը նա անվանում է անիմաստ, քանի որ այն բաղկացած է կեղծ նախադասություններից, որոնցում կա՛մ բառերն են զուրկ նշանակություններից, կա՛մ նախադասության կառուցվածքն է ինքնին սխալ: Այսպես, օրինակ, նա իմաստազուրկ է հա-

¹⁸ Гумбольдт 1984, 58.

¹⁹ Гумбольдт 1984, 58.

²⁰ Айер 2010.

²¹ Աղայան 1967, 22:

²² Карнап 1993, 11-26.

մարում **սկզբունք** բառը՝ այն համարելով էմպիրիկ²³ հատկանիշներից զուրկ: Եթե ասում ենք x-ը y-ի **սկզբունքն** է (օրինակ՝ «աշխարհի սկզբունք»), ապա նշանակում է «y-ը ծագում է x-ից», սակայն «...չէ՞ որ **ծագում է** բառն այստեղ զուրկ է սովորաբար իրեն բնորոշ պայմանական-ժամանակային կապից»²⁴: Կառնապը հղում է կատարում բառի ծագման լատիներեն (principium՝ «սկիզբ») նախնական իմաստին՝ փաստելով, որ այն կորցրել է իր սկզբնական ժամանակային իմաստը, իսկ նոր իմաստավորված հասկացություն չի ստացել, այնինչ սկսել է գործածվել մետաֆիզիկայում: Նույն տրամաբանությամբ նա քննում է նաև **Աստված** բառը, որն իհարկե էմպիրիկ կերպով «...կարող է ընկալվել որպես Օլիմպոսում բազմած մարմնական էակ ...կամ հոգևոր-հոգեկան էակ, որ չնայած մարդու նման մարմին չունի, այնուամենայնիվ տեսանելի աշխարհի իրերում և գործընթացներում ինչ-որ կերպ դրսևորում է իրեն»²⁵, այնինչ մետաֆիզիկայում Աստված ներկայանում է որպես գերէմպիրիկ էակ: **X-ը Աստված է** տարրական նախադասությունը կազմելիս մետաֆիզիկի մտապատկերում հայտնվում են այնպիսի անիմաստ բառեր, ինչպիսիք են *սկզբնապատճառ*, *աբսոլյուտ* (բացարձակ իդեա՝ ոգի), *էություն* և այլն, որոնք էմպիրիկորեն ըմբռնելի չեն և անհնար է ստուգել նրանց ճշմարիտ կամ կեղծ լինելը²⁶: Փաստորեն, *իմաստաբանական իդեալիզմի* տեսաբանները ժխտում են ընդհանուրի և մասնավորի, վերացականի ու իրականի միասնությունն ու փոխապայմանավորվածությունը: Անվիճելի է, որ լեզվի բոլոր համակարգերը (հնչյունական, բառային, քերականական ևն) պետք է դիտարկվեն իրենց զարգացման պատմական հաջորդականության մեջ, միմյանցով փոխապայմանավորված փոփոխությունների տիրույթում:

Մտածական և բառիմաստի պատմական զարգացման տիրույթների հարաբերակցությունը

Որպես վերոնշյալի ապացույց՝ դիտարկենք ընդամենը «Անձերի անվանումներ» բառիմաստային դաշտում «Անձ, մարդ» ենթաբազմության «Իրա-

²³ Զգայական փորձի վրա հիմնված:

²⁴ Карнап 1993, 13.

²⁵ Карнап 1993.

²⁶ Карнап 1993, 12.

կան անձինք, մարդիկ» բառիմաստային խմբի²⁷ *գնահատողական երանգավորմամբ* տարբերակների (**գլուխ, թռչուն, պտուղ, նմուշ, տարր**)՝ հինհայերենյան շրջանից մինչև մեր օրերի բառարանագրական վկայությունները²⁸։ Միջանկյալ փաստենք, որ բառիմաստային դաշտում ընդգրկված առանձին բառի նշանակությունը կախված է հարևան բառերի նշանակություններից, որոնք, լրիվությամբ ծածկելով հասկացական դաշտը, ձևավորում են մի յուրահատուկ խճանկար։ Խոսողի կամ խոսակցի գիտակցության մեջ բառերն առկա են ոչ թե ցրված, այլ իմաստով միմյանց հետ կապակցված, որոնք ձևավորում են որոշակի տրոհելի ամբողջություն, կառուցվածք (Gefüge), որը կարելի է անվանել **բառային դաշտ** կամ **բառային նշանների** (Wortzeichenfeld) **լեզվական դաշտ**²⁹։ Ասել է, թե՛ յուրաքանչյուր լեզվի բառապաշար (ընդ որում՝ նրա զարգացման բոլոր գոյավիճակների տիրույթում) հասկացական միավորների (բառույթների) շարունակ փոփոխվող մասնատելի-ամբողջական մի բարդ համակարգ է։ Մասնատելի, որովհետև լեզվի բառապաշարում նրա միավորները կարող են ձևավորվել՝ «խմբավորվել» մի դեպքում ըստ *ձևական* նմանության (ասենք՝ նույնատիպ հոլովմամբ՝ **քրոջ, սկեսրոջ, տալոջ** ևն), մյուս դեպքում՝ *ձևական-իմաստային* (խոսքի մասեր, արմատական բառերի բառաբներ՝ մեծ-**մեծություն-մեծանալ**, նույնատիպ կաղապարով՝ վա**զող, մտածող, ստեղծող**), նաև սակավ դեպքերում՝ *իմաստային* (գեղեցիկ-չքնաղ-աննման-սքանչելի) հարացույցներում՝ որպես վերջիններիս դասակարգման մասնավոր, տեսակային դրսևորում։ Այսպիսով, լեզվի բառապաշարը ներկայանում է որպես բազալերտ հարացուցային միավորումների փոխկապակցված բարդ կառուցվածք։ Այս առումով ուշագրավ է ռուս մեծ լեզվաբան Վ. Վինոգրադովի մի դիտարկում. «Իմաստային երևույթները («նշանակությունները») լեզվում ձևավորում են ներքին կապված շարքեր՝ հիմնված ընդհանուր բաղադրիչի կամ հատկանիշի վրա, և նախևառաջ հարաբերակցվում են այդ շարքերի ներսում։ Այդ շարքերն էլ, իրենց հերթին, հետևելով նույն սկզբունքին, հանդիսանում են բարձրագույն դասի անդամներ, և այդպես շարունակ։ Անշուշտ, «այդ բոլոր շարքերը» ոչ

²⁷ Բառիմաստային այս խմբի *ընդհանուր նշանակություն* իրացնող բառույթներն են՝ **անհատ** (ականություն), **անձ(ն)** (ավորություն), **դեմք, հոգի, մահկանացու, մարդ, սուբյեկտ, տիպ** (ար), **քաղաքացի, քաղքենի**։

²⁸ Աւետիքեան, Սիրմելեան, Աւգերեան 1836-1837, Մալխասյանց 1944, Լեզվի ինստիտուտ 1969, Աղայան 1976, Սուքիասյան 2009։

²⁹ Լեզվաբանության մեջ **իմաստային դաշտ** հասկացության առաջին տեսական հիմնավորումն արել են գերմանացի լեզվաբաններ Յ. Տրիրը և Գ. Իպսենը (հմմտ. Ipsen 1924, Trier 1931)։

միայն հարաբերակից են, այլև օժտված են փոխադարձ կապակցվածությամբ և կախվածությամբ»³⁰:

Այսպես, **գլուխ, թռչուն, պտուղ, նմուշ, տարր** բառույթներով հինհայերենյան շրջանում «անձ, մարդ» *գնահատողական երանգավորում* պարունակող իմաստույթով բառիմաստային տարբերակներ չեն իրացվել. դրանք դիտարկվել են պատմական ավելի ուշ շրջանում (հմմտ. **Գլուխ** - «3. Փոխ. Գլխի կ[ա]մ ուղեղի գործունեության արդիւնք, խելք, դատողություն, յիշողութիւն ևն: ...*հ'նչ գլուխ ունի...*», ՀԲԲ, էջ 446, «5. փխբ. Մեծ խելքի տեր մարդ», ԱՀԲԲ, էջ 244, նաև՝ ածականի արժեքով կայուն կապակցություններ՝ *պայծառ գլուխ, խելացի գլուխ, դատարկ գլուխ* [դատարկագլուխ], *տաք գլուխ* [աժ. տաքգլուխ], *ցրված գլուխ* ևն, **Թռչուն** - «գ. 6. Փոխ. Անխելք, թեթևամիտ», ՀԲԲ, էջ 129, «գ. 4. փխբ. Անխելք՝ թեթևամիտ մարդ», նաև ածականի արժեքով՝ «6. փխբ. Փոփոխամիտ, անհաստատ բնավորությամբ», ԱՀԲԲ, էջ 457³¹, **Նմուշ** - «6. Որևէ բանի տիպար», ԱՀԲԲ, էջ 1074³², **Պտուղ** - դարձվածքի կազմում (հմմտ. *Ինչ պտուղն ե՛ս* (կ[ա]մ է՛), «Դու այն մարդը չես..., որից կարելի է այդ բանը սպասել»), ՀԲԲ, էջ 126, «10. փխբ. Գործածվում է որևէ հատկանիշով բնութագրվող (առավել. ժխտական բայով կամ հեգնական առոգանությամբ) անձի կամ առարկայի անորոշ դերանվան նշ., արարած, էակ, բան... *Դու էլ բարի պտուղ չես...*», ԱՀԲԲ, էջ 1230³³, **Տարր** - «7. Մի մարդ կամ մարդկանց խումբ՝ իբրև կազմիչ մասն հասարակության կամ կազմակերպության (Պետք է կուսակցությունը մաքրել օտար *տարրերից*)», ՀԲԲ, էջ 389, «7. փխբ. Մարդ, անձնավորություն (սովորաբար՝ բացասական գնահատականով): Կասկածելի՝ բարոյալքված՝ հակահեղափոխական տարր», ԱՀԲԲ, 1427):

Բառահոգվածներից մեջբերվող բառույթների իմաստային «համարակալումները» վկայում են, որ «անձ, մարդ» նշանակող բառիմաստային են-

³⁰ Виноградов 1975, 295-312.

³¹ Խոսակցական ոճում հեգնական երանգավորմամբ իրացվել են նաև «որևէ կարևոր կամ անհասկանալի, անհայտ մարդ» (հմմտ. *Է՛ս ինչ թռչուն է* (այսինքն՝ ո՛վ է)), ինչպես նաև «բարձր դիրք զբաղող անձ» (հմմտ. *Նա հիմա բարձր թռիչքի թռչուն է, նրան չես հասնի*) նշանակող իմաստույթներ, նաև դարձվածքի կազմում՝ «ազատ, անկախ մարդ» իմաստույթով՝ **ազատ թռչուն**:

³² Բառույթի գնահատողական երանգավորմամբ իմաստույթը («Մարդ, որն իր տարօրինակ վարքագծի պատճառով հարուցում է անհամաձայնություն, զարմանք») իրացվում է նաև հասարակաբանություններում (հմմտ. *Նա, իհարկե, նմո՛շ է*), նաև դարձվածքի կազմում՝ «փոքրագույն քանակությամբ» իմաստույթով՝ **նմուշի համար**:

³³ Խոսակցական ոճում գործածական է նաև *մեծ պտուղ* կապակցությունը՝ «մեծամիտ, ինքնահավան» իմաստույթով, արհամարհական երանգավորմամբ (հմմտ. *Էդ ի՛նչ մեծ պտուղ ես, որ մերժեցիր այդ հրավերը*: - Ա.Մ.):

թաքազմության բառույթների իմաստային կառուցվածքում կատարվել են *աստիճանակարգային* փոփոխություններ. այս դեպքում՝ միջուկից ծայրամաս (լինում է նաև հակառակը): Արդ, եթե լեզվի և մտածողության հարաբերակցության հիմնախնդրում առաջնորդվում ենք *իմաստաբանական իդեալիզմի* էմպիրիզմով (որ ցանկացած հասկացության կամ բառի հիմքում փորձն է) և *լեզվաբանական հարաբերականության* տեսաբանների՝ իմացության մետաֆիզիկական մեթոդով՝ անվերապահորեն ժխտելով ընդհանուրի և մասնավորի, վերացականի ու իրականի միասնությունն ու փոխադասարկվողվածությունը՝ այդպիսով հակադրվելով դիալեկտիկային, այն է՝ երևույթները սովորաբար դիտարկում ենք դրանց փոխկապակցվածությունից, հակադրություններից ու զարգացումներից դուրս, և եթե ժխտում ենք, որ աշխարհի օբյեկտիվ ընկալումը կատարվում է մտածողության միջոցով, որն իր արտահայտությունն ստանում է լեզվում՝ սուբյեկտում, ապա պատմական հոլովությամբ ինչպե՞ս են այս իմաստները հայտնվել մարդու մտածական տիրույթում «անձ, մարդ» գնահատողական երանգավորման հավելմամբ: Ըստ էության, բառի իմաստային կառուցվածքն ընդլայնվել է՝ *փոխանվանական հիմքով* իրացնելով նոր նշանակություններ: Մեր դիտարկմամբ՝ փոխանվանական հիմքով իմաստույթներ իրացնելն ուղղակիորեն կապված է մտածական մի հատկանիշի հետ, որը, լայն առումով, *վերացարկումն* է³⁴: Արդեն նշեցինք, որ քննվող բառույթների իմաստային կառուցվածքում «անձ, մարդ» իմաստույթով վկայություններ՝ «վերացարկումներ» չկան հին և միջին հայերենում. դրանք պատմականորեն ավելի նոր իրողություններ են՝ առավելապես ռուսերենից՝ իմաստի պատճենմամբ³⁵: Փոխանունությունը, փաստորեն, փոխաբերական իմաստավորման մի դրսևորում է, երբ կատարվում է մտածական կառուցվածքի սեղմում կամ հատում, որը բնական է մեր գիտակցության համար ինչպես ստեղծման, այնպես էլ ընկալման փուլում: Ընդ որում, նման՝ գնահատողական երանգավորմամբ միավորնե-

³⁴ Ի դեպ, բառապաշարային միավորների *բառակազմական պարմական տեղաշարժերի* ընդհանրական պատկերում նախ առաջացել են արմատական բառերը, հետո՝ ածանցները: Վերջիններս ենթադրում են ավելի խոր վերացարկումներ, որոնք անմիջականորեն կապված են մարդու մտածողության զարգացման, օբյեկտիվ իրականության ընկալման և հասկացական դաշտի ընդլայնման հետ: Նույնը և բառի իմաստային կառուցվածքի ընդլայնման պարագայում, երբ կատարվում է այս կամ այն տերմինախանակարգին պատկանող բառերի երանգավորում՝ անշուշտ, պայմանավորված պատմական, հասարակական-քաղաքական, սոցիալ-մշակութային, ազգամշակութային հասկացական տեղաշարժերով (ինչպես վերջերս՝ Անկախության շրջանում, դրական կամ բացասական երանգավորում ստացած՝ *պարոն, փիկին, դաշնակ, քարոզչություն, իշխանիկ* և այլ բառույթները: Այս մասին ավելի հանգամանորեն տե՛ս հմմտ. Մարտիրոսյան 2007, 158-181):

³⁵ Հմմտ. РАН, Ин-т рус. яз., под общей ред. Н.Ю. Шведовой, 2002:

րի կիրառությունն առավելապես բնորոշ է բառապաշարի խոսակցական շերտին: Բառիմաստի պատմական զարգացման տիրույթում լեզվի և մտածողության փոխկապակցվածության դրսևորումները բազում են. մենք արձանագրեցինք դրանցից մեկը միայն:

Մի կարևոր հավելում ևս: Լեզվի և մտածողության կամ բառի և հասկացության հարաբերակցության միասնականության, փոխապայմանավորվածության շրջանակում խոսելով գիտության լեզվի մասին՝ Ա. Էյնշտեյնը դիպուկ նկատում է. «Մենք կարող էինք հակված լինել մտածողության ակտին վերագրելու լեզվի հանդեպ լրիվ անկախություն, եթե անհատը կազմավորեր կամ էլ ի վիճակի լիներ կազմավորելու իր պատկերացումները՝ չօգտվելով իր շրջապատի բառերից: Բայց անհատի մտավոր կերպարը և նրա պատկերացումների կազմավորումը մեծապես կախված են լեզվից: Դա մեզ հնարավորություն է տալիս հասկանալու, թե լեզվի ընդհանրությունն ինչ չափով է նշանակում մտքի կազմավորման ընդհանրություն... Այս իմաստով մտածողությունը և լեզուն փոխադարձաբար կապված են»³⁶: Փաստորեն, Էյնշտեյնը մեծապես կարևորում է լեզվի դերը մարդու գիտակցության մեջ աշխարհի պատկերի ձևավորման գործընթացում՝ դուրս-ինչ չնվազեցնելով մտածողության դերակատարությունը: Այս համատեքստում ուշագրավ է նաև հայ անվանի փիլիսոփա Գ. Բրուստյանի դիտարկումը խնդրո առարկայի վերաբերյալ. «...իրականության իմացության բարդ պրոցեսում մեր գիտակցության մեջ ծագում են նրա երկու մոդելները՝ հասկացական (տրամաբանական) և բառային (լեզվական): ...բառային պատկերացումը, լեզվական պատկերները, ընդհանրացված կերպով արտահայտելով իրականության լեզվական մոդելը, տարբերվում են լեզվից լեզու. հասկացական կամ տրամաբանական մոդելը անփոփոխակ է, բոլոր մարդկանց համար ընդհանուր՝ անկախ նրանից, թե ինչ լեզվով են նրանք մտածում և արտահայտում իրենց միտքը»³⁷:

Եզրակացություններ

Այսպիսով, լեզվի և մտածողության, այն է՝ բառի և հասկացության հարաբերակցության հիմնախնդիրը քննելիս պետք է արձանագրել հետևյալը.

³⁶ Эйнштейн 1966, 13.

³⁷ Բրուստյան 1972, 131:

1. Հիմնախնդիրը վաղուց անտի քննվել է տարբեր գիտակարգերի շրջանակում՝ փիլիսոփայություն, ֆիզիոլոգիա, հոգեբանություն, տրամաբանություն, լեզվաբանություն և այլն: Քննարկման հիմքում լեզու և մտածողություն երևույթների հակասականությամբ պայմանավորված՝ աշխարհաճանաչման գործընթացում վերջիններիս առաջնայնության կամ գերակայության հարցադրումն է կամ բառիմաստի պատմական զարգացման տիրույթում ո՞րն է որով պայմանավորված:

2. Իմաստաբանական իդեալիզմի և լեզվաբանական հարաբերականության տեսությունների կողմնակիցները (Հումբոլդտ, Սեպիր, Ուորֆ, Այեր, Կառնապ և այլք), լեզվին գերակա դեր վերապահելով, մարդկանց կենսագործունեությունը բխեցնում էին լեզվից՝ գտնելով, որ բառերը զուրկ են իրական նյութական իմաստից, որ դրանք չեն համապատասխանում իրական երևույթների ու առարկաների հասկացություններին և իրականությունից կտրված են:

3. Սակայն ընդհանուր է մի դրույթ (Է. Ադայան, Է. Աթայան, Գ. Բրուտյան, Վ. Զվեգինցև, Վ. Վինոգրադով, Ա. Էյնշտեյն և այլք). լեզուն ու մտածողությունը գտնվում են փոխկապակցված և փոխազդեցական հարաբերության մեջ: Թե՛ մտքերը և թե՛ լեզուն ինքնին իրական կյանքի դրսևորումներն են, և չնայած նրանց կապը հայելային չէ, այնուամենայնիվ, նրանցից յուրաքանչյուրի գոյությունը «պայմանավորված է» մյուսով, նրանց միջև գործում է դիալեկտիկական հակադրամիասնության օրենքը:

4. Լեզվի բառապաշարը ներկայանում է որպես բազմաշերտ հարացուցային միավորումների փոխկապակցված բարդ կառուցվածք. ցանկացած բառ բազում հարաբերություններով կապված է հարյուրավոր բառերի հետ, իսկ հազարավորների հետ էլ այդ կապը միջնորդավորված է. այն հնարավոր է մեկնաբանել բառային հարացույցի մեկ այլ՝ ավելի ընդգրկուն տեսակով՝ բառերի դասերով (բառիմաստային դաշտերով): Յուրաքանչյուր դասի հիմքում ընկած է բառերի նմանության սկզբունքը՝ ըստ որևէ ընդհանուր բաղադրիչի («անձ, մարդ»), որը տվյալ դասում միավորված բառերի (**գլուխ, թռչուն, պտուղ, նմուշ, տարր**) ընդհանրական բնութագրիչն է: Նշված միավորների իմաստային երանգավորմամբ իմաստոյթներ իրացնելն ընթացել է փոխանվանական հիմքով, որն ուղղակիորեն կապված է մտածական տիրույթի ընդհանրացման և ճշգրտման հետ, հատկանիշ, որը, լայն առումով, *վերացարկուն* է:

5. Լեզվական կանոններն ունեն անհատական բնույթ, մինչդեռ մտա-
ծողությունը համընդհանուր է, համամարդկային՝ անկախ նրանից, թե ինչ
լեզվով են մտածում և խոսում (հմմտ. հայ. **գլխով** տղա – ռուս. **парень с го-
ловойой** – անգլ. a man **with brains**, ֆրանս. – être un homme de **tête**, կարևոր
թռչուն – важная **птица** – big **shot**, personnage m **de haut vol**, սա՞ ինչ **պտուղ** է
– это что еще за **фрукт**? – who the **deuce** is that?, quel est ce **type**-là?, հան-
ցագործ **տարր** – преступный **элемент** – the criminal **element**, **élément** criminel):

Գրականություն

- Աթայան Է. 1981, Լեզվական աշխարհի ներքին կերպավորումը և արտաքին վերաբե-
րությունը, Երևան, ԵՊՀ հրատ., 392 էջ:
- Աղայան Էդ. 1976, Արդի հայերենի բացատրական բառարան, 2 գրքով, Երևան, «Հա-
յաստան», 1642 էջ:
- Աղայան Էդ. 1979, Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 1-2, Երևան, «Հա-
յաստան», 1618 էջ:
- Աղայան Էդ. 1967, Լեզվաբանության ներածություն, Երևան, «Միտք», 638 էջ:
- Անետիքեան Գ., Սիրմելեան Խ., Ազերեան Մ. 1979, Նոր բառգիրք հայկազեան լեզուի,
Երևան, ԵՊՀ հրատ., 1037 էջ:
- Բրուտյան Գ. 1972, Փոխաբանություն և լեզու, Երևան, «Հայաստան», 537 էջ:
- Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան 1969, հ. I-IV, Երևան, Հր. Աճառ-
յանի անվան Լեզվի ինստիտուտ, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիա-
յի հրատ., 2763 էջ:
- Մալխասյանց Ստ. 1944, Հայերեն բացատրական բառարան, հ. 1-4, Երևան, Հայկական
ՍՍՌ, Պետհրատ., 647 էջ:
- Մարտիրոսյան Ա. 2007, Արդի հայերենի նորաբանությունների բառակազմական կա-
ղապարները, Հավելված, Երևան, «Էդիթ պրինտ», 234 էջ:
- Սուքիասյան Ա. 2009, Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, Երևան,
ԵՊՀ հրատ., 1242 էջ:
- Айер, Алфред Джулс 2010, Язык, истина и логика, под общей ред. В.А. Суровцева, Мо-
сква, «Канон+» РООИ «Реабилитация», 240 с. (Language, Truth and logic, 1936).
- Виноградов В. 1975, Об омонимии и смежных явлениях, Избр. труды: исследования по
русской грамматике, т. 1, Москва, «Наука», 559 с.
- Гумбольдт В. 1984, О различии организмов человеческого языка и о влиянии этого раз-
личия на умственное развитие человеческого рода, В. Гумбольдт, Избранные
труды по языкознанию, Москва, «Прогресс», 397 с.
- Звегинцев В. 1962, Очерки по общему языкознанию, Москва, изд. Московский ун.-т, 384 с.
- Кант И. 1966, Антропология с прагматической точки зрения, Соч., т. 6, Москва,
«Мысль», 743 с.
- Карнап Р. 1993, Преодоление метафизики логическим анализом, «Вестник МГУ», сер. 7,
«Философия», N 6, с. 11-26.

- Кодухов В. 1979, Введение в языкознание, Москва, «Просвещение», 351 с.
- Кондаков Н. 1975, Логический словарь-справочник, Москва, «Наука», 721 с.
- Логика 1956, под ред. Д.П. Горского и В.П. Таванца, Москва, Государственное издательство политической литературы, 280 с.
- Маркс К., Энгельс Ф. 1955, Немецкая идеология, Соч., т. 3, Москва, Государственное издательство политической литературы, 629 с.
- Русский семантический словарь 2002, Толковый словарь, систематизированный по классам слов и значений, т. I, РАН, Ин-т рус. яз., под общей ред. Н.Ю. Шведовой, Москва, 807 с.
- Сепир Э. 1993, Избранные труды по языкознанию и культурологии: пер. с англ., общ. ред. и вступ. ст. А.Е. Кубрика, Москва, Издательская группа «Прогресс», «Универс», 656 с.
- Спорные проблемы курса «Общее языкознание» 1996, Чесноков П.В., изд. Таганрог. пед. ин-та, Таганрог, 176 с.
- Шубняков Б. 1981, Единство языка и мышления. Подготовка учителя иностранного языка в педагогическом вузе: вопросы методологии, Киев, «Политиздат Украины», 115 с.
- Эйнштейновский сборник 1966, А. Эйнштейн, Общий язык науки (The common language of science. Advancement of science, 1942), Москва, «Наука», 376 с.
- Whorf B. 1966, Language and Personality, Cambridge, Massachusetts, The M.I.T. Press, 483 p.
- Ipsen G. 1924, Der alte Orient und die Indogermanen, Stand und Aufgaben der Sprachwissenschaft, Festschrift für Wilhelm Streitberg, Heidelberg, Carl Winter, 683 S.
- Trier J. 1931, Der deutsche Wortschatz im Sinnbezirk des Verstandes, Heidelberg, Carl Winter, 237 S.

Համառոտագրություններ

- ՆԲՀԼ - Նոր բառգիրք հայկազեան լեզուի
- ՀԲԲ - Հայերէն բացատրական բառարան
- ԺՀԼԲԲ - Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան
- ԱՀԲԲ - Արդի հայերենի բացատրական բառարան
- ՀՀՀԲԲ - Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան

ԼԵԶՎԻ ԵՎ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԲԱՌԻՄԱՍՏԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Արտաշես Մարտիրոսյան

Ամփոփում

Լեզվի և մտածողության հարաբերակցության հիմնախնդիրը վաղուց անտի ջննվել է տարբեր գիտակարգերի շրջանակում՝ փիլիսոփայություն, ֆիզիոլոգիա, հոգեբանություն, տրամաբանություն, լեզվաբանություն և այլն: Քննարկման հիմքում

լեզու և մտածողություն երևույթների հակասականությամբ պայմանավորված՝ աշխարհաճանաչման գործընթացում վերջիններիս առաջնայնության կամ գերակայության հարցադրումն է: Իմաստաբանական իդեալիզմի և լեզվաբանական հարաբերականության տեսությունների կողմնակիցները (*Հում-բոլդր, Սեյիթ, Ուորֆ, Այեր, Կառնապ* և այլք), լեզվին գերակա դեր վերապահելով, մարդկանց կենսագործունեությունը բխեցնում էին լեզվից՝ գտնելով, որ բառերը զուրկ են իրական նյութական իմաստից, որ դրանք չեն համապատասխանում իրական երևույթների ու առարկաների հասկացություններին և իրականությունից կտրված են: Սակայն ընդհանուր է մի թեզ (*Է. Ադայան, Է. Աթայան, Գ. Բրուսյան, Վ. Զվեգինցև, Վ. Վինոգրադով, Ա. Էյնշտեյն* և այլք): Լեզուն ու մտածողությունը փոխկապակցված և փոխազդեցական հարաբերության մեջ են: Լեզվի բառապաշարը ներկայանում է որպես բազմաշերտ հարացուցային միավորումների փոխկապակցված բարդ կառուցվածք: ցանկացած բառ բազում հարաբերություններով կապված է հարյուրավոր բառերի հետ, իսկ հազարավորների հետ էլ այդ կապը միջնորդավորված է: այն հնարավոր է մեկնաբանել բառային հարացույցի մեկ այլ՝ ավելի ընդգրկուն տեսակով՝ բառերի դասերով (*բառիմաստային դաշտերով*): Յուրաքանչյուր դասի հիմքում բառերի նմանության սկզբունքն է՝ ըստ որևէ ընդհանուր բաղադրիչի («**Անձ, մարդ**»), որը տվյալ դասում միավորված բառերի (**գլուխ, թռչուն, պտուղ, նմուշ, տարր**) ընդհանրական բնութագրիչն է: Լեզվական կանոններն ունեն անհատական բնույթ, մինչդեռ մտածողությունը համընդհանուր է, համամարդկային՝ անկախ նրանից, թե ինչ լեզվով են մտածում և խոսում:

Բանալի բառեր՝ լեզու, մտածողություն, բառ, հասկացություն, դատողություն, լեզվաբանական հարաբերականություն, դիալեկտիկական հակադրամիասնություն:

ПРОБЛЕМА СООТНОШЕНИЯ ЯЗЫКА И МЫШЛЕНИЯ В КОНТЕКСТЕ ИСТОРИЧЕСКОГО РАЗВИТИЯ СЕМАНТИКИ СЛОВА

Арташес Мартиросян

Резюме

Издавна проблема соотношения языка и мышления рассматривалась в контексте разных дисциплин: философии, физиологии, психологии, логики, лингвистики и т.д. Сущность вопроса заключается в противоречивости понятий *язык* и *мышление*: что чем обусловлено. Приверженцы теорий семантического идеализма и лингвистической относительности (*Гумбольдт, Сепир, Уорф, Айер, Карнап* и др.), представляя главенствующую роль языка в

жизнедеятельности человека, считали, что слова не соответствуют понятиям реальных явлений и предметов, они лишены реального материального значения и оторваны от действительности. Тем не менее, в теориях этих ученых, равно как и в теориях их оппонентов (Э. Агаян, Э. Атаян, Г. Брутян, В. Звегинцев, В. Виноградов, А. Эйнштейн и др.) общим является тезис: язык и мышление взаимосвязаны и взаимодействуют. Словарь языка является сложной взаимосвязанной конструкцией многослойных парадигматических соединений. Любое слово с многочисленными отношениями взаимосвязано с сотнями других слов, а с тысячами слов эта связь опосредована. Это можно трактовать с помощью другой, более обширной лексической парадигмы – классом слов или *семантическим полем*. В основе каждого класса лежит принцип сходства слов по одному общему признаку («лицо, человек»), являющемуся обобщенным значением слов. Языковые правила индивидуальны, в то время как мышление является всеобщим, общечеловеческим, независимо от того, на каком языке мыслят и говорят.

Ключевые слова – язык, мышление, слово, понятие, суждение, лингвистическая относительность, диалектическая противоположность.

THE PROBLEM OF THE CORRELATION OF LANGUAGE AND THINKING IN THE CONTEXT OF HISTORICAL DEVELOPMENT OF THE SEMANTICS OF WORD

Artashes Martirosyan

Abstract

The problem of correlation of language and thinking has long been considered in the context of different disciplines: philosophy, physiology, psychology, logic, linguistics, etc. The essence of the issue lies in the inconsistency of the concepts of *language* and *thinking*: what is caused by what. Adherents of the theories of semantic idealism and linguistic relativity (*Humboldt, Sepir, Wharf, Ayer, Carnap*, etc.), representing the dominant role of language in human life, believed that words do not correspond to the concepts of real phenomena and objects, they are devoid of real material meaning and divorced from reality. Nevertheless, in the theories of these scientists, as well as in the theories of their opponents (*E. Aghayan, E. Atayan, G. Brutyan, V. Zvegintsev, V. Vinogradov, A. Einstein*, etc.), the following thesis is common: language and thinking are interconnected and interact. The dictionary of a language is a complex interconnected structure of multi-

layered paradigmatic connections. Any word with multiple relationships is interconnected with hundreds of other words, and with thousands of words which mediate this connection. This can be interpreted with the help of another, more extensive lexical paradigm – a class of words or a *semantic field*. Each class is based on the principle of similarity of words by one common feature ("**Person, man**"), which is the generalized meaning of words (**head, bird, fruit, instance, element**) combined in this class. Language rules have an individual character, while thinking is universal, universal, regardless of what language a person thinks or speaks.

Key words – language, thinking, word, concept, judgment, linguistic relativity, dialectical opposition.